

Փ Ո Ւ Ն Ձ

Օ Ր Ա Պ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հատը 40 փարայ է : — Մայրաքաղաքիս մէջ բաժանորդ ըլլալ ուղողը պիտի վճարէ 100 թուող համար . իսկ գաւառաց մէջ 25 դուրուշ , գարձեալ 100 թուող համար , թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պետք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս . Լուսաւորիչ Եկեղեցւոյ վարի գրանը հից նոր Գրատունը :

ԱՂԳԱՅԻՆ

Շարաթ օրը հրատարակելով մայրաքաղաքս դանուող եպիսկոպոսայ Ս . Պատրիարք Հօր կողմանէ կանչուիլը , կկարծէինք թէ՛ Նորին սրբազնութիւնը վերջապէս ուշ գնելով Աղղին լրութեան այլեւայլ իրաւացի դանդաւանաց եւ բողոքներուն , ժողով պիտի կազմէ աղղային ներկայ տարաւած ու աղետալի վիճակին համար աղղու դարման մը խորհելու , եւ նոցա միաբանութեամբ կայսերական կառավարութեան հաղորդելու համար : Սակայն երէկ ընդհակառակն մեծաւ զարմանօք ստուգեցինք որ շարաթ օրը Գումգաիուի Պատրիարքաբանը Տ . Պօղոս Ս . Պատրիարքին հրահրամանն ու նախադահութեամբը եօթն եպիսկոպոսաց ժողովն մեր կարծած նպատակին համար չէ եղեր , այլ ուրիշ մէկ քանի որոշմանց համար , որ են հետեւեալք .

Ա . Ներկայ տարուոյս օրացոյցներէն մէկ քանիին մէջ առաջիկայ կիւրակէ օրուան համար « հարսանիք » նշանակուած ըլլալով , իբրև խնդիր առաջարկեր եւ հարցուցեր է թէ « կրնայ հարսանիք ըլլալ նոյն օրը , քանի որ այս

տարի աւագ տօներն կյաջորդեն անմիջապէս » : Ժողովը որոշեր է թէ՛ նոյն օրն հարսանիք ըլլալն Եկեղեցւոյ դէմ չէ :

Բ . Պապին հրահրագիրը մէջ բերելով , եպիսկոպոսաց կարծիքն իմանալ ուղեր է , եւ որոշուեր է որ բնագիրն գրկուի ի դիտողութիւն վեհափառ կաթողիկոսի Ս . Էջմիածնի :

Գ . Եէնիգարուի քարոզիչ Գրիգորիս վարդապետը Եկեղեցւոյն բեմին վրայ անդւոյն քահանայից դան անարդած եւ նոցա կողմանէ սաստիկ բողոք եղած ըլլալով , յիշեալ վարդապետը կանչուեր եւ որոշուեր է որ անպատճառ դարձեալ հրապարակու ետ առնէ ըրած անարդանքն :

Ահա՛ ասոնք են եղած որոշումներն : Կրնդ ունիմք թէ՛ առաջինը իբրև կրօնական խնդիր մը՝ խորհրդակցութեան արժանի է : Սակայն չեմք կրնար չդարմանալ , երբ կնկատեմք որ Ս . Պատրիարք հայրը այսպէս վարուած չէ կրօնական խիստ կարեւոր խնդրոց մէջ : Կիլիկեցի Նիկիոպոս եպիսկոպոսը դարձաւ Կիլիկիա , առանց կրօնական համազումար ժողովոյ դիտութեան , մինչդեռ աշխարհ խնայաւ թէ՛ կրօնական

Անժ ժողովներով վճռուած էր նորա վերադարձին անկարելիութիւնը :

Երկրորդ խնդիրն եպիսկոպոսաց ժողովոյն մէջ դնելու ժամանակը շատ անցած էր : Ըսել է թէ Պապին հրաւիրագիրը վ. կաթողիկոսին չէ գրկուեր առկաին :

Երրորդ խնդիրը նոյն ինքն Ս. Պատրիարքը կրնար առանձինն կարգադրել : Պատրիարքի մը համար այնչափ մեծ բաժն է վարդապետ մը մէկերկու քահանայից հետ իրաւախոս ընելու խնդիրը :

Այս դիտողութիւններով չեմք ուզեր հետեւցնել թէ Ս. Պատրիարքին յանցանք է այսպիսի խնդրոց համար եպիսկոպոսաց խորհրդակցութեան դիմելը : Այլ կցաւիմք որ ուրիշ ծանրակշիռ դէպքերու մէջ միայնակ դործելով, ուզած ատենը կողաց խորհրդակցութեան օգուանները : Այլ կզարմանամք որ այսպիսի ժամանակի մը մէջ յորում իւր գլխուն վրայ ամէն կողմանէ գանդաւաններ կտեղան և դժգոհութեան ձայները իստա բարձրացած են իւր դէմ, ինքն կըբաղի այսպիսի խնդիրներով, որք խիտա նուազ կարեւոր են : Հասարակութիւնը երբ լսեց որ Ս. Պատրիարքը չորեքշաբթի օրը Բ. Դուռը գացեր է, երբ խնայաւ որ եպիսկոպոսունք ժողովի կկանչուին, համարեցաւ թէ օգտակար անօրէնութեամբ մը դարման պիտի ըլլայ իւր ներկայ վիճակին. սակայն ահա այս համարումն ալ պարապը ելաւ : Օրեր կանոյնին և սակաւին կարգադրութիւն մը չըլլաք : Ս. Պատրիարքը կարծես լսել չուզեր Ազգին ձայնին :

Այսպէս պէտք էր ըլլայ ազգին վիճակը, ազգային սահմանադրութեամբ ընարեալ և ազգային սահմանադրու-

թեամբ ընթանալու ու խտեալ Պատրիարքի մը օրով : Ռ՛ւր է Սահմանադրութիւն. ո՛ւր է ազգային վարչութիւն : Տ. Պողոս Պատրիարքը, կրանն, ի՛նչպէս սակաւին կըբաղի պատրիարքական դահուն վրայ մինչդեռ Աստուծոյ և Ազգին առջև ըրած հանդիսաւոր ուխտին համեմատ Սահմանադրութիւնն իրեն առաջնորդ և ազգային ընտրուած վարչութիւն մը իրեն գործակից չունի :

— Կրեմք թէ խառն ժողովոյ անդամաց վրայ պիտի աւելնան փախալեան Գէորգ, Մանուկեան Սենեքերիմ և Եօրաամեան Հայրապետ Էֆէնախները :

— Նոր կըսուի թէ Պապը ո՛չ միայն Ս. Պատրիարքին, այլև թէքիրատղի Առաջնորդ Դեր. Թադէոս Արքեպիսկոպոսին և Պրուսայի Առաջնորդ Դեր. Բարթաղովմէոս եպիսկոպոսին հրաւիրողը դրկեր է, որոց առաջինը չընդունելով անմիջապէս ետ դարձուցեր է, իսկ երկրորդը Ս. Պատրիարքին ի մացուցեր է :

Չվիտցուիլ թէ ինչ դիտմամբ յիշեալ եպիսկոպոսաց այսպէս առանձինն հրաւեր եղած է Հռոմէն :

— Երէկ մայրաքաղաքիս թաղերուն մէջ հետեւեալ իմաստով հանրագրեր ստորագրուիլ սկսան :

« Մեր լուսաւորչական հայոց ազգին արդի տարածմ վիճակը, եւ Ս. Պատրիարքին պարտազանցութեամբը ազգին ամեն զործերը երեսի վրայ թողուելով՝ ազգային կրօնական իրաւանց անգործադրելի մնալը տեսնուելով, իրաց այս վիճակին դարման մը մատուցանելու համար Ս. Պատրիարքին քանի մը ամիս յառաջ ստուած հրաժարականը ընդունել տալէ, կամ վերջնական կերպով իր հրաժարականը մատուցանելէ վերջը, մինչ զընտրութիւն Պատրիարքի՝ Ազգին կողմէն Յեղապահ մը գրուելու մասին կայսերական բարեխնամ Առաջադրութեան տըր-

ուելիք աղերսագրոյն մեք եւս համութիւն
ունենալիս յայտնելու համար, ներկայ հան-
րադիրս յօժար կամօք կատարադրեմք»:

—Ինչպիսի մէջ իրաւունք անունով հա-
յերէն շարժական նոր թերթ մը հրա-
տարակիլ սկսեր է, խմբագրութեամբ
Միրզայեան մեծ. Սարգիս ազայի: Այս
նոր թերթն տակաւին տեսած չըլլա-
լով, իւր պայմաններուն վրայ չեմք կըր-
նար կատարեալ տեղեկութիւն տալ, և
միայն ի բողբ սրտէ յաջողութիւն ու
յարատեւութիւն մագթելէ յետոյ՝ կը
ծանուցանեմք թէ տարեկան դինն է
վեց արծաթ մէճիա կանխիկ վճարելի:

ՔՍՂՍ.ՔՍԿԱՆ

Կրսուի թէ՛ Գաղղիա և Մեղղիա յօ-
ժարութիւն չեն սար ճաճկատանի և
Յունաստանի խնդրոյն լուծման համար
դեռպանաժողովոյ մը կազմութեան,
թէեւ կկարծուի թէ յիշեալ տէրու-
թեանց միջոցաւ պատերազմին առաջը
կառնուի:

—Վիեննայէն կհեռագրեն թէ՛
դեռպանաժողովի մը կազմութեան հա-
մար բանակցութիւնները կշարունակեն:

—Պուրթէյէն լուր կայ թէ խորհրդ-
գարանին վաւերացմամբ՝ Փարիզի,
Վիեննայի, Պերլինի, Ս. Բեդերսպուր-
կի և Կոստանդնուպօլսոյ մէջ քաղաքա-
կան դործակրտարներ պիտի նստին. և
ճաճկատանի կայսրութեան շատ նա-
ւահանդիսաներու մէջ հիւպատոսներ
պիտի հաստատուին:

—Օսմանեան և հելլենացի հպատա-
կաց դատերը տեսնելու համար որոշ-
ուած յանձնաժողովը, դործի սկսելէն
ի վեր, 60—70 աղերսագրեր ընդունե-
ցաւ: Ուրիշ յանձնաժողով մ'ալ որ
Սրբիթիտի և Սթավրաքի էֆէնայինե-
րէն կբաղկանայ, Ռատիկանա թեան

դուռը հաստատուած է, հելլենացի
հպատակաց անցագիր, և հելլեն գրօ-
չակ ունեցող նաւերու վկայագիր տա-
լու համար, որպէս զի Կ. Պօլսէն մեկնին:

Այս յանձնաժողովը իւր առաջին
նիստին մէջ որ անցեալ հինգշաբթի տե-
ղի ունեցաւ, եօթանասուն և չորս ան-
ցագիր և 23 վկայագիր տուած է:

Շատ անձինք ալ կարեւոր վկայա-
գիր չունենալնուն համար, անցագիր
ուղած ատենին զգուշութեան տակ
դուրեցան:

—Կրեաէէն գրուած իննսեւով տե-
ղական կառավարութիւնը վէճ մ'ունե-
ցեր է խալիոյ հիւպատոսարանին հետ:
Աւստրիական շոգեհատով խալոյի խա-
լական հիւպատոսարանին թարգմանը
գալով՝ կուզէ նաեւն դուրս ելլել. սա-
կայն ձեռքի անցագիրը Օսմանեան
տեսչութեան կողմանէ ալ նշանակուած
չըլլալուն համար նաեւն ելնելու թոյլ-
տուութիւն չըլլար: Խալիոյ հիւպա-
տոսը այս արգելքը լսելով, անձամբ
շոգեհատ կերթայ և յիշեալ թարգմանը
հետը նաեւն դուրս կհանէ, առանց
մտիկ ընելու ոստիկանութեան դործա-
կալին աղբարարութեանց:

Տեղական կառավարութիւնը խա-
լիոյ հիւպատոսէն կպահանջէ որ կամ
յիշեալ թարգմանը երթայ և կամ հիւ-
պատոսարանը երաշխաւորութիւն մը
տայ, սպառնալով որ եթէ մերժէ իւր
խնդիրը՝ Բ. Դրան պիտի խնայնէ. իսկ
խալիոյ հիւպատոսը պատասխաններ է
թէ անոր անցագիրը պակասութիւն
չունի:

—Ինտանէն կհեռագրեն թէ՛ քա-
լոյ պաշածեսայք կրկին բնադուելով
այս առթիւ Պ. Կրասովըն յայտներ է
որ իր մէկ նպատակն ալ է Տերութեան
ծախքերը կարճել: Պ. Պրայթ ալ ծա-

նուցեր է թէ կառավարութիւնը ամեն քաղաքական միջամտութիւն մէկդի թողալ՝ ազգին շահուց վրայ պիտի խորհի :

—Վիէնայէն կհեռագրեն թէ այն քաղաքիս ռուսական դեսպանը սուս կհանէ այն լուրը , որ տարածուած է թէ Ռուսիա յոյն նաւերու թողաուութիւն պիտի ընէ Ռուս դրօշակ պարզելով Օսմանեան նաւահանգիսանները մտնելու :

—Վիէնայէն լրագիր մը կժանուցանէ թէ աւստրիական կայսրութեան գանձուց պաշտօնեայն դեսպան ընտրուած է մայրաքաղաքիս աւստրիական դեսպանին տեղ՝ որ օգտախոսութեան պատճառաւ եղիպատս դնայ :

—Անգղիական դեսպանատան առաջին քարտուղարը որ քանի մը շաբաթէ ի վեր Անգղիա կդանուէր , շաբաթ օրը մայրաքաղաքս հասաւ դադղական կօտակէրի շոգեխումով :

—Հելլենական դեսպանական երկրորդ և երրորդ կարգի թարգմանները Օսմանեան հպատակութիւնը ընդունելու են :

—Լեվրնթ Հերըլտի գրուած նամակէ մը կը քաղենք : «Եկրէի և Աթէնքի մէջ մեծ պատրաստութիւններ կը լան , և Յունաստանի զանազան կողմերը բերդեր կկառուցուին . դռնդ մը հեծելազօր երկրին տահմանագլուխները կդանուի : Արդէն Հելլեն կառավարութիւնը 100 միլիոն տրախմիի փոխառութիւն մը վաւերացուցած է , և Պելճի գայէն սանդուաւոր հրացան բերել կուտայ : Լանարայէն դրահաւոր նաւ մը Գէորդ Ա. անուամբ , և թրիէտոէն ալ Օւկա անուն ֆրիաթօն մը դալու վրայ են :

—Արապկերէն հոկտ. 9 թուով գրուած հեռուեալ նամակին հրատարակութիւնը խնդրուած է :

«Քաղաքիս ժողովուրդը սեպ. 26 ին կիրակի օրը լսելով որ վիճակիս նոր ընտիր Առաջնորդ արժ. Տ. Տիմոթէոս Ծ. փարդապետը քաղաքէս մէկ ժամուշափ հեռու Մու—պաշր բառած տեղն հասած է , մեծ ու պզտիկ քահանայի և երգեցիկ մանկանց դատուց հեափութային գիմնարներու : Նորին արժանապատուութիւնն հոն քիչ մը հանդստանալէն յետոյ , անթիւ բարձրութեամբ ձիաւորաց և հետեւակաց քաղաքը մտաւ , հեծեալ Տէրպետեանց բարեհամբաւ տունէն ի սրատիւ դրիւռուած փառաւոր ձիուն վրայ : Քաղաքին մօտեցած ատենը զինքը գիմնարեց Հռոմէականաց Տ. Միսօն փարդապետն : կառավարութեան կարմանէ ատիճանաւոր զինուորականք առջեւէն երթալով ճամբաց կրանային . եկեղեցեաց զանգակներն ու երգեցիկ մանկանց քաղցրաձայն երգերն օդը կլծին դալուսնէին : Այսպէս շքեղ հանդիսի նախ Մ. Լուսաւորիչ եկեղեցին մտնէլէն յետոյ , եկաւ Մայր եկեղեցին : Հոն օրհնեց ջերմեռանդ ժողովուրդն , և համառօտ բայց վայելուչ ատենախօսութեամբ յորդորեց զամենքը հաստատուն մնալ Հայաստանեայց Ս. եկեղեցուց դերիը միարանական սիրով ու խաղաղութեամբ : Անկէց ուղղակի իջաւ Առաջնորդարանը , և մերպնեայց ու օտարազգեաց այցելութիւններն ընդունեց արժանաւոր մեծարանօք :

Մտացանք նշանակել թէ , բողոքականաց քարոզիչն ալ փութայաւ դիմաւորել Նորին արժանապատուութիւնը» :

ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱՅՏ
ՇՈՒՄԼՈՒԹԱՆ

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԵՐ
Հ. Ս. ԱՂԱՋԱՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԲԻՐԲՁԵԱՆ